

նադատի լրջութիւնը Օչականի քով, որ կ'ողտոտէ, որ փութով կը բանաձեւէ տեսութիւնները՝ առանց հիմնապէս քննած ըլլալու իրերը, մարդերը, գրքերը: Յաշտեմալեան արժէք կը փնտռէ այն՝ որ միջազգային գեղեցկութիւնները կ'ոտնակոխէ, յաշտեմալեան արժէքները կը փնտռէ այն՝ որ Ալիշանի մէջ չէ կրցած գտնել ճշմարիտ բանաստեղծի երակը, յաշտեմալեան արժէք կը փնտռէ այն՝ որ «Պատուս»ը հինցած կը հաշակէ՝ տարակոյսի տակ առնելով անոր դարերով նուիրականացած վարկը, յաշտեմալեան արժէք կը փնտռէ այն՝ որ «Գրախտ կորուս

տեալ»ը շքեղ բառախոյտ մը կ'անուանէ, այն՝ որ չի կրնար կարգաւ «Մանֆրէտ»ը՝ ուր կայ հոգեկան տագնապի ուժեղ երգը:

Կարելի է կատարել դիտողութիւններ սփի, զաղախարային ճշտութեան կամ անճշտութեան շուրջ ո՛ր է գրական յաջող դործի մը, բայց ոչ այնպէս՝ ինչպէս կ'ընէ Օչական, որուն ելոյթը՝ մանաւանդ հանդէպ միջազգային արժէքներու՝ կրնար մեծապէս զրգուել նաեւ գայրոյթը միջազգային քննադատներու՝ եթէ իր քննական էջերը եւրոպական լեզուով մը գրուած ըլլային:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս

Ես լրացի աղատաշունչ մըրբիկներու երգը խըրոխտ,
Վըշտաղալար ալիքներու յուսակըտուր կոծը փըրփըրոտ,
Անտառներու սարսուռ տըւող խիղախ հովին սոյլը դըժխեմ,
Եւ տարփասէր գեփիւններու սիրարարառ շըշունչը մեղմ:

Ես փընտռեցի, արեւ հասնող իմ տենչերուս ցող մը յոյսի,
Անդունդի պէս խորունկ բացուած մութ վէրքերուս շող մը լոյսի,
Մըւայլ ճակտիս, ամպոտ աչքիս, արջալոյսի ծիծաղ մը վառ,
Ա՛խ, վարդերէն, դուր խընդրեցի, բոց մը սիրոյ, սըրտիս համար:

Ես սիրեցի գիշերներու ժրպիտ տըւող հոյն աստղերուն,
Մութ աչքերու մէջ հեծեծող առուակներու կարկաչն անքուն,
Խաղաղ ձիւնին սիրտը փըրփըրող այն սարսուռէր հովիկն անտուն,
Եւ հերարձակ ուռիներու լալահառաչ վիշտը անհուն:

Բայց ձայնիդ պէս, մայր իմ անոյշ, քաղցրաթրթիւ երգ չողտոյ,
Նայուածքիդ պէս վըշտահալած արջալոյսներ դեռ չըտեսայ,
Ոչ մէկ հովիկ, համբոյրիդ պէս սիրարորոք սարսուռ կու տայ,
Ա՛խ, վէրքերուս, դըղունքէդ դատ ըսփոփարար դարման չըկայ:

Ոչ մէկ գիշեր, աչքերուդ պէս աստղեր ունի կարօտավառ,
Ոչ մէկ արեւ սըրտիդ նըման կըրակ ունի սիրոյս համար,
Քանի կ'ապրիս, ոչ մէկ դարուն ծիծաղիդ պէս վարդեր բացաւ,
Ա՛խ, այս երկրէն, դեռ քեզի պէս ժրպիտ ցանող հրեշտակ չանցաւ:

Հալեպ, 10 Յունուար 1949

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԹԷ ՍԻԱԼ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

(ՊԱՏԱՍԽԱՆ ԳԵՐՇՇՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ)

«Հասկ» ամսաթերթին մէջ, 1944-էն ի վեր, «Քրիստոնեան գերեզմանէն անդին» վերնագրով երկուր յօդուածաշարք մը հրատարակած է Գերշ. Փառէն Եպիսկոպոս. (այն ատեն Մայրագոյն Վրդ.):

Առաջին մասով, հանրութեան կը ներկայացնէ մեռելներու յարութեան, յաւիտենական դատաստանին և երկնքի արքայութեան վարդապետութիւնները, մանրամասն նկատողութիւններով և երբեմն նաեւ բարոյական-խրատական եզրակացութիւններով¹: Իր ուսումնասիրութեան առաջնորդ նկատած է միշտ Ս. Գիրքը և մասնաւորապէս Հայ Եկեղեցւոյ Ս. Հայրերը:

Երկրորդ մասին մէջ աւելի կը մասնաւորապէս խոսի տեսութիւնները, բնեւորով Հայ Եկեղեցւոյ մէջ ննջեցեալներու ի նպաստ կատարուած աղօթքներու, պաշտօններու, պատարագի և ուրիշ նուիրական արարողութիւններու (ինչպէս մարտիրոսներու տօնախմբութեան) ծագումը և իմաստը. առանձնապէս և երկարօրէն կը խօսի սուրբերու բարեխօսութեան վարդապետութեան մասին²:

Հուսկ կը յարէ յաւելումական ծառայութիւն մը առանձնական դատաստանի և քաւարանի մասին, անդրագոյն լուսաբանութիւն մը ուզելով տալ իր բնիկեցողներուն³:

Գերշ. Հեղինակին ներկայացուցած վարդապետութիւնը այսպէս կարելի է ամփոփել իր գլխաւոր կէտերուն մէջ, զրեթէ բառացի հետեւողութեամբ.

1. - Մահէն վերջ մեռելներու հոգիները

(1) 1944. թ. 8-10, էջ 121-124. թ. 11-12, էջ 151-154, 1945. թ. 1-2, էջ 9-11. թ. 6-7, էջ 124-126. թ. 8-10, էջ 156-158. թ. 11-12, էջ 210-213, 1946 թ. 1, էջ 11-12.

մարմիններէն բաժնուելով կը հաւաքուին իրենց յատկացուած կայանի կամ օթեանի մը մէջ և հոն կը սպասեն յարութեան և միակ դատաստանին՝ տիրանալու համար իրենց յաւիտենական երանութեան կամ տանջանքին (Հասկ 1945. թ. 6-7, էջ 125. թ. 1, էջ 10):

2. - Բուն երկնքի արքայութիւնը, այն է Աստուծոյ երանական տեսութեան և վայելքի տեղը գոց է ներկայիս և ոչ ոք հոն կը մտնէ (Հասկ 1947. թ. 5, էջ 119). Հին Ուխտի արդարներն ու Նոր Ուխտի սուրբերը միասին կը սպասեն կայանին մէջ (Հասկ 1946, թ. 7-8, էջ 206 ծանօթ.):

3. - Գոյութիւն չունին, ըստ Փառէն Սրբազանի, ո՛չ առանձնական դատաստանը, որ ակնթարթի մէջ տեղի պիտի ունենայ ամէն մարդու մահէն վերջ, ո՛չ ալ՝ քաւարանը, ուր ժամանակ մը պիտի տանջուին թեթեւ մեղքերով մեռողները:

4. - Մանաւանդ թէ, այդ զոյգ վարդապետութիւնները կ'որակէ իբր քմածին, հակա-աւետարանական և խորթ Հայ Եկեղեցիին (Հասկ 1947. թ. 1, էջ 11). և իր վարդապետական ծառայոյն իշխանութեամբ «Իսկ որ առանձն» բանաձեւով նզովք կը կարգայ բոլոր անոնց որ առանձնական դատաստանի, քաւարանի հաւատք կ'ընծայեն (Հասկ 1945. թ. 8-10, էջ 158):

(2) 1946. թ. 6, էջ 173-176. թ. 7-8, էջ 205-207. թ. 9-10, էջ 249-252, 1947. թ. 1-2, էջ 11-13. թ. 4, էջ 86-89.

(3) 1947 թ. 5, էջ 118-122.

Ապա կարծէք զգալով որ մեր ծիսական ինչ ինչ ազոթներն ու արարողութիւնները կրնան հակասել իր բացատրութիւններուն, ուսումնասիրութեան երկրորդ մասին մէջ կը շարունակէ.

5. - Հայ Եկեղեցւոյ մէջ ննջեցեալներու համար ազոթելու, բարեգործութիւններ կատարելու և յատկապէս պատարագ մատուցանելու սովորութիւն կայ. բայց ասոնք կամայականացած, աւելի յետին դարերու ընթացքին մտած, տարածուած ու ճոխացած պաշտամունքներ են և շատ անգամ օտար ազդեցութիւններու արդիւնք (Հասկ 1946. թ. 9-10, էջ 249-251):

Ազոթքի այս պաշտամունքը, զոր ողջ հաւատացեալները կը մատուցանեն Աստուծոյ՝ հանգուցեալներու ներքին մեղքերու թողութեան համար, ծագած է մարդկային բնական և բարեացակամ բազմաբնէն (Հասկ 1946. թ. 7-8, էջ 205-206):

- Այս ազոթքը կը կատարուի սա խմաստով և համազումով՝ թէ մեր ննջեցեալներու հոգիները յոյսով պիտի սպասեն կայանին մէջ մինչեւ Քրիստոսի վերջին գալուստը և ընդհ. դատաստանին օրը. այն ատեն միայն Աստուած զանոնք պիտի դատէ (Հասկ 1946. թ. 9-10, էջ 249-250):
6. - Մեր մէջ շատ հին ատենէն սովորութիւն կայ սուրբերու բարեխօսութեան ապաւինելու (Հասկ 1947. թ. 4, էջ 86). այս բարեխօսութիւնը տեսակ մը փոխարինութիւն է՝ ողջերու կողմէ ննջեցեալներու համար կատարուած ազոթքին:

Սուրբերու հոգիները կայանէն

պատրաստ են լսելու մեր օրինաւոր ազոթքներուն և միջնորդելու Աստուծոյ. բայց այս բարեխօսութիւնը յար և նման է ողջ հաւատացեալներու կատարած ազոթքին, ուստի կը կատարուի առանց երանական աստուածատեսութեան (Հասկ 1947. թ. 1, էջ 11):

7. - Աշխարհի կատարածին, մարմիններու փառաւոր յարութենէն վերջ, Քրիստոս պիտի կատարէ միակ և ընդհ. դատաստանը ու այն ատեն միայն սուրբերը (Հին և Նոր Աւետի) պիտի մանեն բուն երկնքի արքայութիւնը, իսկ մեղաւորները պիտի իջնեն դեմոնք, սատանային կողմէ պատրաստուած յաւիտենական կրակին մէջ (Հասկ 1945. թ. 8-10, էջ 156. թ. 11-12, էջ 211):

Այս աստուածաբանական տեսութիւնները զանազան բնագիտական կէտեր կը պարունակեն. ու Գերյ. Վարդան Վ. Թէքէեան, «Աւետիք» ամսաթիւերին մէջ երեք յօդուածներով ցոյց տուած է հեղինակին գլխաւոր թերի կէտերը. ան փաստացի ու հակիրճ ներկայացուցած է մասնակի դատաստանի և բաւարանի գոյութիւնը, շատ մը ապացոյցներ բերելով Հին և Նոր կտակարանէն, առաքելական Հայրերէն, Գ. դարու մեծահռչակ հայրապետներէն, մեր Հայ Եկեղեցւոյ կրօնական մատենագրութենէն ու ծիսարանէն⁴. հուսկ նաեւ Հազարամետի սխալ վարդապետութեան, Եկեղեցական կալուածներու ծագումին, սուրբերու բարեխօսութեան և ուրիշ մանր հարցերու շուրջ զիտուութիւններ և սրբագրութիւններ կատարած⁵:

Փոխադարձաբար Գերյ. Փառէն Եպ. ալ

(4) Աւետիք, 1947. թ. 9-10, էջ 171-174, 1948. թ. 1-2, էջ 26-30.

(5) Աւետիք, 1948. թ. 5-6, էջ 91-96.

երեք յօդուածներ կը հրատարակէ ջանալով պատասխանել իր հակառակորդին⁶: Այդ պատասխաններուն մէջ հեղինակը կրկին ու կրկին կը շեշտէ իր նախորդ կարծիքները ու կ'ուզէ հարցը աւելի լուսաբանել: Իր եզրակացութիւնը կ'ըլլայ՝ թէ բաւարանի վարդապետութիւնը բոլորովին անձանթ է Հայ նուիրական մատեններու հեղինակներուն, և թէ՛ ծիսական մեր զրբերուն մէջ բաւ մ'իսկ չկայ որ հեռուէն իսկ շօշափած ըլլայ այդ վարդապետութիւնը (Հասկ 1948. թ. 10, էջ 260). և կը կարծէ թէ մինչեւ ԺԱ.-ԺԲ. դար, հայ Եկեղեցւոյ և մատենագրութեան մէջ ոչ ննջեցեալ կանոն և ոչ սեւեւ ճառ գոյութիւն ունենայ (Հասկ 1948. թ. 8-9, էջ 228). և կը վերջացնէ ըսելով. «...Հայ Եկեղեցին չ'ընդունիր թէ առանձնակի դատաստանը և թէ բաւարանի վարդապետութիւնները, ընդունելով հանդերձ ազոթին ննջեցեալներու հոգիներուն համար և՛ խնդրել Քրիստոսէն՝ որ զթա՛յ և ողորմի՛ անոնց հոգիներուն, բայց Աստուծոյ թողութիւնը կամ ոչ, ողորմի՛ կամ չողորմի՛ միւսանգամ գալստեան և դատաստանին օրը» (Հասկ 1948. թ. 10, էջ 263):

Ահա վճիռներ, որոնց չէր կրցած հանդուրժել «Հայ հաւատացեալ» անգամ, և պարզ բայց ազդու տողերով բողոքի ձայն բարձրացուցած էր⁷, նախանձա-

խնդիր ըլլալով Հայ Եկեղեցւոյ զարաւոր աւանդութեան և նուիրական արարողութիւններուն հարազատ հոգւոյն և իմաստին:

Վիճաբանութեան հետեւած էինք, բայց չուզեցինք միջամտել. ներկայիս թոյլ տրուի մեզի քանի անդրադարձութիւններ կատարել այդ երկարաշունչ ուսումնասիրութեան շուրջ և ապա նաեւ քանի մը խօսք՝ անդենական հարցերու մասին:

Շատեր անժամանակ և անպէտ կը նկատեն այս վիճաբանութիւնը⁸. սակայն ճշմարտութիւնը միայն երեւան հանելու գիտական նպատակով մենք կ'ուզենք քննել այդ խնդիրները, ոչ իբրեւ կրօնական վէճ, այլ իբրեւ դաւանաբանական պրպտութիւն, ամփոփուելով միայն Հայ Եկեղեցւոյ աւանդութեան և սրբազան մատենագրութեան մէջ:

Ներկայ յօդուածին շարժառիթ եղան Մխիթար Աբրահօր անունին և կարծիքին երբեակ յիշատակութիւնները Գերյ. Հեղինակի յօդուածաշարքին մէջ⁹: Կրկին ու կրկին կարդացինք այդ պարբերութիւնները, ապա անցանք քննելու և վերլուծելու հաւաքապէս ընթերցելու Գերյ. Հեղինակի գրչէն մէկ քանի անճշգրտութիւններ սահմադրելու և ահա Մեծն Մխիթարի իսկական վարդապետութիւնը հանրութեան ներկայա-

(6) Հասկ, 1948. թ. 4, էջ 95-99. թ. 8-9, էջ 226-230. թ. 10, էջ 260-265.

Ամենքն առաջ սակայն, կարծէք այս վիճաբանութեան յարաւանական բնոյթ տալով, Գերյ. Հեղինակը հեղինական բացատրութիւններով իր ընդդիմախօսին դաւանանքին կ'աղանակէ. մինչեւ իսկ Վ. Գր. Պետր. Ժ. Կարա. Աղաճանեանի «Հոգեւորական թուղթ» քերական կապ կը դնէ (արդեօք բանասիրական), ու «Նոր իմն Զրադաշտականութիւն», «Վասնական օրինակացի» անակիտ արդարանքով կը նախատէ իր քննադատին նուիրականութեան Գլուխը: Այս բոլորը կը զրաւէ երկուք ու կէս սիւն, իբրեւ ներածութիւն. ինչ որ լուրջ ընթերցողի մը վրայ անհաճօյ սպասութիւն կը

գործէ ու թերթին կրօնական-բանասիրական հանգամանքին արտաքին կը բերէ:

(7) Մասիս, 1948 Նոյ. 24, էջ 2 (Պէյրութ): Մեր այս յօդուածը տպագրութեան յանձնելու պահուն, տեսանք որ Հասկ-ի մէջ (1949, թ. 2, էջ 43-50) Գերյ. Փառէն Սրբ. կը ջանայ պատասխանել, դարձեալ զոր ծածկելով նախատական անսանձ բանաձեւեր. և իսկոյն Մասիս-ի մէջ (Մարտ 2, 1949. թ. 9 [114] էջ 2) պատասխան ալ նկատեցինք:

(8) Արեւելք, 1948 Գեկտ. 11, էջ 2 (Հալէպ):

(9) Հասկ, 1947. թ. 5, էջ 119-120, 1948. թ. 4, էջ 96. թ. 10, էջ 264.

ցընելու նուիրական պարտականութեամբ, յարմար դատեցինք այդ առաջին ուսումնասիրութեան արդիւնքը այստեղ պարզել, իբրեւ ներածութիւն յաջորդներու:

Ա.

ՈՐԿ Է ՄԻԻԹԱՐ ԱՅԲԱՀՕՐ ՀԱՐԱՋԱՏ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

1. — Գերշ. Փառէն Եպսկ. իր ուսումնասիրութեան 13-րդ յօդուածին մէջ, յաւելուածական ծանօթութեամբ կը ջանայ հերքել առանձնական դատաստանի ու քաւարանի վարդապետութիւններուն ի նպաստ յիշատակուած փաստերը (տես ծանօթ. 3): Յատկապէս կը ծանրանայ առաջինին վրայ ու նախ կայանի իմաստով կը բացատրէ «Մեծատան և աղքատ Ղաւարոսի» առակը (Ղուկ. ԺԶ. 19-31)¹⁰. ապա անցնելով Քրիստոսի՝ աջակողմեան աւագակին ուղղած սա խօսքին, թէ «Այսօր ընդ իս իցես ի զրախտին» (Ղուկ. ԻԳ. 43), կը զրէ:

«Բայց հոս՝ դրախտը արքայութիւն չի նշանակեր, այլ՝ պարտէզ, զոր օրինակ Ադամին երանութեան դրախտը (Ծննդ. Բ. 8) ըստ Եօթանասնից, և ըստ Երբայականին՝ Եղեմ: — Եւ Քրիստոս ինքն իսկ ոչ անձամբ և ոչ աւագակին հետ, տակաւին մտած չէր բուն արքայութիւնը իր մարդկային հոգիով, այլ՝ իջած էր դժոխքը (շօղ կամ հատու)՝ իր մահէն վերջ, ազատելու համար սուրբերու (Հին Ուխտի) հոգիները (ըստ Աթանասեան հանգանակին), ինչպէս կ'ընդունին նաեւ Հոռմէականները և բողոքականները: — Միւթար Աբբան, իր «Մատթէոսի Մեկնութեան»

մէջ (տպ. Վենետիկ 1737, էջ 883-4) կ'ըսէ թէ. «Ի նմին աւուր հոգին Քրիստոսի բաժանեցեալ ի մարմնոյն՝ անբաժանելի աստուածութեամբ՝ էջ ի դժոխս առ ի ազատել զհոգիս սրբոց(ն)»¹². և ընդ հոգոյն Քրիստոսի եղեւ նաեւ հոգի(ն) աւագակին: ... Բայց գիտելի է զի թէ՛ հոգիք սրբոց(ն) որք ազատեցան, և թէ՛ հոգի աւագակին տեղաբնակէս էին անդ, ուր էր հոգին Քրիստոսի: Իսկ հոգին Քրիստոսի ի ժամէ աւանդման մինչեւ ի ժամ յարութեան՝ էր ի Լիմպոս, ուրեմն նաեւ հոգիք սրբոց(ն) յայն(ս) երիս աւուրս էին անդ»¹³:

Ապա բողոքական քրիստոնէականէ և մեկնութիւններէ երկու վկայութիւններ բերելով կ'եզրակացնէ.

«Ապա, ուրեմն, շատ պարզ և բացորոշ է՝ թէ Քրիստոս, իր խաչակից աւագակին ուղղեալ խօսքովն ոչ թէ խոստացած է՝ իրեն հետ՝ երկնից արքայութիւնը տանիլ զայն, այլ՝ զրախտը (կամ դժոխքը). որ է արդարեւ հոգիներուն կայանը. և Քրիստոսի այս խօսքով երբեք չհաստատուիր Հոռմէականներուն ... «Առանձնական դատաստան» ի և անմիջական հատուցումի... վարդապետութիւնը»¹⁴:

2. — Աւելի ուշ, նոյն էջերուն տեղաւորելով կ'ըսէ.

«... Առանձնակի դատաստանի և քաւարանի մասին ծանօթութիւններ կցած էինք մեր գործին վերջը: Եւ երկուքին մէջն ալ հետեւած էինք Աւետարանի և Առաքելական թուղթերուն, օգտուելով հայ և օտար (մէջն ըլլալով և՛ Միւթար Աբբայրը) տեսութիւններէն»¹⁵:

3. — Երրորդ անգամ աւելի յստակ

չկան:

(13) Հասկ, 1947. Թ. 5, էջ 119-120.

(14) Անդ. Վերջի կախման կէտերուն տեղ հեղինակը անձականներ կը շարէ:

(15) Հասկ, 1948. Թ. 4, էջ 96.

(10) Նոյն իմաստով նաեւ տես Հասկ, 1945. Թ. 6-7, էջ 125, 1946. Թ. 1, էջ 11, 1948. Թ. 10, էջ 264-265.

(11) Այնչէ՛ մեծաւնեւոր հոգիներու կայանը, նոյն էջին մէջ արուած բացատրութեան համաձայն:

(12) Փակագծի մէջ առնուած տառերը բնագրին մէջ

կ'ըսէ, պատասխանելով Գերշ. Վարդան Վ. Թէքէեանին.

«Եւ այս դրախտը (paradis) յունական Լիմպոս (limbe) է — արդար մեռելից հոգիներու կայանը և ոչ թէ «արքայութիւն»ը՝ ինչպէս կը կարծէ Յարգ. Յօդուածագիրը, և Միւթար Աբբայրին ալ այսպէս կը մեկնարանէ իր Մատթէոսի Մեկնութեան մէջ՝ զրեւով «Քրիստոս և աւագակը Լիմպոս գացած են և երեք օր մնացած հոն»: Որովհետեւ այս աւագակին և՛ Հին և Նոր Ուխտի բոլոր սուրբերուն հոգիները իրենց կայաններուն մէջ պիտի մնան՝ սպասեն Քրիստոսի միւսանգամ գալուստին, և դատաստանէ վերջը պիտի անցնին բուն զրախտը կամ արքայութիւնը»¹⁶:

Եզրակացութիւն.

Գերշ. Փառէն Սրբազանի նպատակն է, ինչպէս կը տեսնուի, ցոյց տալ որ աջակողմեան աւագակին ուղղուած խօսքերէն կարելի չէ ապացուցանել առանձնական դատաստանի և անմիջական հատուցումի վարդապետութիւնները, որովհետեւ՝ ըստ իրեն՝ այդ խոստացուած զրախտը չի նշանակեր բուն արքայութիւնը, այլ՝ Լիմպոսը կամ արդար հոգիներու կայանը, ուր կը հաւաքուին բոլոր սուրբերը, ուր գացած է նաեւ բարի աւագակը:

Այս տեսակէտը մեկնարանելու պահուն է որ Միւթար Աբբայր հատուածը մէջ էր բերէ իրեն ի նպաստ, աւելի ուշ կը պարծի ալ այդ յիշատակութեամբ, կարծէք ըմբերանելու համար իր ընդդիմախօսը, առանձնական դատաստանի և անմիջական հատուցումի ջատագովը:

Լուսարարութիւն և Պատասխան.
Միւթար Աբբայր այդ հատուածին

(16) Հասկ, 1948. Թ. 10, էջ 264.

ԲԱԶՄԱՎԵՊ

մէջ յիշատակուած Լիմպոսը առանձնաշատուկ նշանակութիւն և պարագայ կը ներկայացնէ, զոր Միւ. Աբբայր յայտնապէս կը մատնանշէ. այս կէտը սակայն անտեսուած է զժրախտաբար Գերշ. Հեղինակէն. ան պէտք էր աւելի խորանալ պարզելու համար այդ տողերուն հարազատ իմաստը, և այն ատեն միայն պիտի յաջողէր Մեծն Միւթարի իսկական կարծիքը ներկայացնել և իրաւացի կերպով օգտագործել:

Աւելին կայ. Միւ. Աբբայր խօսքերը մէջ բերելէն վերջ, ան մեկնութեան և եզրակացութեան կ'անցնի՝ «որովհետեւ» «այս, որեւէ, շատ պարզ և բացորոշ է» բացատրութիւններով, միշտ կայուն է և ոչ թէ բուն արքայութեան՝ իմաստ տալով հատուածին (տես ծանօթ. 13 և 16): Հարցը այսպէս ներկայացնելով, ընթերցողներուն վրայ այն տպաւորութիւն կամ տարակոյս կը թողու, կարծելով թէ Միւթար Աբբան ալ կայանի վարդապետութեան ջատագով մը ըլլար, հետեւաբար նաեւ հակառակող՝ մասնակի դատաստանին և անմիջական հատուցումի. ու ահա այսպէս ձայներ և հարցումներ հասան մեր ականջին՝ լուսարարութեան խնդիրներով:

Աւելի հետաքրքրական յայտնութիւն մըն ալ:

Գերշ. Փառէն Եպս. շատ ճարտարութեամբ և փափկութեամբ կը մօտենայ Միւ. Աբբայր բնագրին. նախ կարեւոր մաս մը կը թողու, ապա յիշատակած վկայութեան մէջ կախման կէտեր կը գործածէ, կը ցատկէ 14 տող ու յանկարծ չակերտով կը գոցէ, մինչ Միւ. Աբբայր տալու կարեւոր, ներկայ հարցին համար կենսական ու վճռական բացատրութիւն մը կու տայ:

Ամբողջութեամբ ներկայացնենք այդ կտրատեալ հատուածը, որ իսկական հատուած է դարձեր, ընդգծելով միայն Հեղինակին յիշատակած տողերը.

Էջ 883, սխալ Բ, տող 33:

«Ո՛վ աւագակ, որովհետեւ դու յայտնիկ ժաւու՛ր զիս որ եմ ի խաչի՛ դաւանեցար տէր և Աստուած քո, ամէն ասեմ քեզ. այսինքն ստուգապէս, և հաստատաբար ասեմ քեզ զայս, զի ի սմին աւուր, այսինքն զկնի երից ժամուց՝ և դու ընդ իս իցես ի դրախտին. այսինքն ի յաւիտենականի երանութեան, որ սակս մեծագունի փափկութեան կոչի դրախտ: Դու խնդրեցիր յինչն միայն զյիշումն յայնմիկ աւուր՝ յորժամ գայցեմ փառք ի յերկնից. և սակայն ես այսօր երանացուցանեմ զքեզ, և անեմ, զի թագաւորիցես ընդ իս ի յերկնիս:

Աւստի աստէն անուամբ դրախտին ո՛չ կարէ իմացեալ լինիլ եղեմական դրախտն, ուր եղեւ Ադամ. զի ի նմին աւուր հոգին Քրիստոսի բաժանեցեալ ի (884) մարտնոյն՝ անբաժանելի աստուածութեամբն է՝ ի դժոխս առ ի ազատել զհոգիս սրբոց. և ընդ հոգեւոյն Քրիստոսի եղեւ նաեւ հոգի աւագակին: Եւ քանզի հոգին Քրիստոսի ի սկզբանէ միշտ տեսնելով զաստուածային էութիւնն էր երանեցեալ, արար ըստ խոստման իւրում, զի և հոգի աւագակին ընդ բաժանիլն ի մարմնոյն տեսանիցէ զաստուածային էութիւնն. և լինիցի այնու երանեցեալ, և ընդ հոգեւոյն Քրիստոսի լինիցի ի դրախտին, այսինքն ի յերանութեան: Եւ որպէս հոգի աւագակին, նմանապէս և հոգիք ամենից սրբոց որք էին ի լիմպոսն, ընդ իջանէն հոգեւոյն Քրիստոսի առ նոսա՝ ազատեցան ի գերութենէ, և ի ձեռացն սատանայի, այնու՝ զի տեսին զաստուածային էութիւնն՝ և եղեն երանեցեալք:

Բայց զիտեղի է. զի քե հոգիք սրբոց՝ որք ազատեցան, և քե հոգի աւագակին՝ տեղակաւնապէս եին անդ, ուր էր հոգին Քրիստոսի: Իսկ հոգին Քրիստոսի ի ժամե աւանդման միւնէն ի ժամն յարութեան էր ի յիմպոսն. ուրեմն նաեւ հոգիք սրբոց յայնս երիս աւուրս եին անդ. և զոլով անդ՝ ոչ էին զուրկք յերանութենէ. քանզի մինչ աստուածային էութիւնն է յամենայն ուրեք՝ նաեւ անդէն տեսանէին զայն»:

Այս խօսքերէն վերջ Միս. Աբրահայր կը բացատրէ թէ ինչո՞ւ բուն զժողովրդի տանջանքներուն մէջ գտնուող մեղաւորները երանութեան չհասան Քրիստոսի փրկագործական արժանիքներով. և նորէն աւագակի խնդրին դառնալով՝ ակնյայտնի

կը մտանանք թէ աւագակին երանութեան հոգեպէս արդէն կատարուած է, իսկ աշխարհի կատարածին՝ հոգեով և մարմնով ալ պիտի երանանայ:

Այդ կը գտնենք բանդակիչ բացատրութիւն մը, միեւնոյն էջին վրայ ուրկէ Գերշ. Փառէն Եպս. իր վկայութիւնը քաղած է. (կը ստորագծենք կարեւոր կէտերը).

«Արդ՝ Քրիստոս տէրն մեր որպէս ընդհանրական դատաւոր՝ բազմեալ ի վերայ խաչին իբրեւ յաթոսը, կշռով խաչին կշռեաց գերկուս աւագակս. և որպէս զճշմարտութեան դաւանողն երանացոյց հոգեով, նոյնպէս և զհայհոյիչն դատաւարեաց հոգեով. և այս եղեւ ցոյցակ և օրինակ առանձնականի դատաստանին՝ զոր առեկող էր իշխարանչիւրոց մարդկանց յաւուր մահուան և ողորդման միւնէն ի կատարած: Քանզի զնոյն դատաստան առեւ միշտ ի վերայ ամենայն մեղաւորաց և արդարոց. զհոգիս սրբոց երանացուցանելով, և զհոգիս մեղաւորաց դատաւարեալով. և յաւուր (885) դատաստանին զիւրաքանչիւրսն ըստ բոլորին դատելով, այսինքն հոգեով և մարմնով: Եւ երբ ունեք զայս ճշմարտութիւն ո՛չ կամիցին ընդունիլ, այլ զկայանալն զնեղ յօժարիցիւն, և զհոգիս արդարոց և մեղաւորաց անդէն ի միասին հաւաքիլ ասիցեն, հարկադրին զի նաեւ զհոգի աւագակին ընդ հոգեւոյ ձախակողմեան աւագակին ի միասին լինիլ հաւատացեն. և այնու զբանն Տեառն զոր ասաց, «այսօր ընդ իս իցես ի դրախտին» ըստ ամենայնի ունայնացուցանիցին:

Եւ բաց յայտցանէ, նորա որք զհոգիս սրբոց կաւիլն զնեղ զրկեցեալ յերանութենէ, և ներփակեցեալ ի կայանալն միւնէն զորն ընդհանրականի յարութեան, հարկադրին զնեղ և զայս անտեղիս, քե Քրիստոս ի ձեռն խաչին և արդեանց իւրոց՝ տակաւին ոչ է բացեալ մեղ գործուն արքայութեան, այլ բանալոց է զայն՝ յետ ընդհանրականի դատաստանին»:

«Մտածելի է ուրեմն միանգամայն նաեւ այս օրհարտութիւն, և ոչ յամառելի է կարծիս. Ոչ որ բան և իրաւունք կարեն տանիլ զայս, թէ որ զսուրբ սոմիցէ՝ և բարեխօս կալնուցու, բայց զհոգիս նոցա ի տեսութենէ աստուածայնոյ էութեան ներկայապէս զրկեալ զոլ հաւատացէ:

«Դարձեալ զիտեղի է, զի այս վճիռ և կտակ Տեառն մերոյ, զոր կտակեաց ասելով, «Այսօր ընդ իս իցես ի դրախտին», զրեցաւ զըջալ խաչին և ամենատուրք արեամբ իւրով՝ որ հեղինիւր ի վերայ խաչին, որպէսզի ըստ ամենայնի անեղծանելի լինիցի. և ամենայն մարդիք ապահովք և ստոյգ եղիցին զբացմանէ զրան արքայութեան երկնից»:

Ամիսփետով կորակացնենք Միսիթար Աբրահայր վարդապետութիւնը, որ ինքնին արդէն շատ յստակ է:

Աջակողմեան աւագակին ուղղած խօսքերով, Քրիստոս տիեզերական թագաւոր, բազմած իր խաչի գահին վրայ, իբրեւ գերագոյն դատաւոր, առանձնականի դատաստան մը կը կատարէ, հանդիսապէս խօստանալով՝ նոյն օրն իսկ բարի աւագակը զրախտ տանիլ, այսինքն լիմպոս, ու հոն՝ միւս Հին ուխտի արդարներուն հետ զայն երջանկացնել երանական աստուածութեան թեմաբ:

Ու ասիկա գերագանց օրինակն էր առանձնական դատաստանին, զոր Քրիստոս ամէն մարդու մահուան օրը կը կատարէ, արդարներու հոգիները երանացնելով և մեղաւորներու հոգիները դատաւարեալով. այսպէս պիտի կատարէ մինչեւ աշխարհի կատարածը. իսկ վերջին դատաստանին՝ պիտի դատէ զամենքը հրապարակաւ և ըստ բոլորին, այսինքն իւրաքանչիւրը՝ հոգեով ու մարմնով:

Միս. Աբր. նոյն վարդապետութիւնը կը պարզէ նաեւ իր Քրիստոսեանականութեան մէջ¹⁷:

Բարի աւագակի հոգին, այդ դատաստանին վճիռով, մահէն վերջ իսկոյն երաւացաւ Աստուծոյ տեսութեամբ լիմպոսի մէջ, այն է՝ Հին Ուխտի արդարներու

կայանին մէջ, ուր երանացան նաեւ արդարները:

Նկատելի է որ Միս. Աբրահայր հաստատեցին մէջ կը կրկնուի ու կը շեշտուի՝ թէ աւագակը լիմպոս մնացած է տեղաւանապէս, երեք օր. Գերշ. Փառէն Աբր. այդ երկու տարրերն ալ յիշատակած է, սակայն առանց խորապէս վերլուծելու. որովհետեւ Միս. Աբրահայր մտքին համաձայն այդ տեղակաւնապէսը զաղափարի սեղմում մըն է և այս իմաստն ունի, այսինքն թէ աւագակը՝ բուն արքայութեան վայելքներն ունեցած է, բայց լիմպոսի մէջ, կամ ուրիշ խօսքով՝ կապէս արքայութեան մէջ եղած է, թէպէտ տեղակաւնապէս՝ լիմպոս: Միսիթար Աբրահայր այս կերպով լուծած ու բացատրած է Քրիստոսի այդ խօսքերը. արդ, ինչո՞ւ Գերշ. Հեղինակը տարբեր իմաստ կու տայ:

Գալով երեք օր-երու հարցին, ան քայլ մ'ալ պէտք էր ընել, հարցնելով թէ երեք օր վերջ աւագակը ո՞ւր գացած է: Միսիթար Աբրահայր վարդապետութիւնը այդ տեղ ալ պարզ է. ներկայիս աւագակը և Հին Ուխտի սուրբերը բուն արքայութեան մէջ են, նաեւ տեղակաւնապէս, որովհետեւ «Տէր մեր զսատանայի ումն ոչնչացոյց, և սրբոց բաժին զժողովրդն (այն է լիմպոսը) քակեց, և սրբոց հոգիքն ազատեց և իր հետ յարքայութիւն տարաւ»¹⁸:

Ահա թէ ինչպէս յստակ ու պայծառ է Միսիթար Աբրահայր կարծիքը:

Մատթիի մեկնութեան ուրիշ էջերու վրայ, անմիջական հատուցումի մասին խօսելով, Միս. Աբր. հետեւեալ խորհրդածութիւնները կը կատարէ, զոր չենք ուզեր անտեսել: Եթէ ներկայիս, մեռելներու

(17) Տպ. Վենետիկ 1725. էջ 114-115. 1750, էջ 98-99:

(18) Գերշ. Քրիստոսեանական վարդապետութեան (աւարհարար), Վենետիկ 1732. էջ 26:

Անդրազոյն ուսումնասիրութեան կը թողում ընելը թէ երբ արքայութիւն մտան այդ հոգիները նաեւ տեղակաւնապէս, արդեօք Քրիստոսի Յարութեան օրը թէ չամբարձան:

հոգիները բուն արքայութեան կամ դժոխքի մէջ չեն, ուրեմն Պետրոս ու Պողոս Առաքելները, մեր Գրիգոր Լուսաւորիչը, Յուդան և բոլոր մեռած չարագործները ներկայիս միեւնոյն կացութեան մէջ են. մանաւանդ թէ, արդարեւ մասամբ տրտում են որովհետեւ չեն վարձատրուած, իսկ մեղաւորները՝ ուրախ, որովհետեւ իրենց պատիժը յետաձգուած է: Ապա մանրամասնորէն կը փաստէ անմիջական հատուցումի վարդապետութիւնը¹⁹:

Այս է Մխիթար Արքայոց հարազատ միտքը և տեսութիւնը: Հետեւաբար Գերշ. Հեղինակին ուսումնասիրութեան մէջ ներկայացուածը՝ իրականութեան մէջ բոլորովին հակառակն է Մեծ Սերարտացիին հարազատ վարդապետութեան, արդ ինչ-

(19) Մեկն. Մատթէի էջ 407-410:

Մխիթար Արքայոց կ'ընդունի նաեւ քաւարանի վարդապետութիւնը. կ'ապացուցանէ անոր գոյութիւնը Մատթ. ԺԲ. զւրկուն 32-րդ համարը մեկնելու պահուն. մեկնողական, աստուածաբանական փաստերուն վրայ կ'աւելցնէ նաեւ Հայ Եկեղեցւոյ դարաւոր ծիսական աւօթքներէն ու արարողութիւններէն վկայութիւններ. էջ 283-284, Հմմտ. նաեւ «Գիրք Քրիստոնէականի վարդապետութեան» վ. նկատիկ 1725, էջ 115. 1750, էջ 98-99: «Քրիստոնէական վարդապետութիւն» մանկական պատկերախաղերով, ապ. վ. նկատիկ 1737, էջ 96-97:

պէս բացատրել այս իրականութիւնը. նոր յայտնութիւն, սխալ մեկնութիւն թէ կամաւոր քողարկում հշմարտութեան:

Բանասիրական ողջամիտ սկզբունքներու համաձայն, հեղինակի մը կարծիքը պէտք է ամբողջական ներկայացուի, հեղինակի մտքին պէս և ոչ թէ ճարտար և անուշիկ կախման կէտերով (....) փոփոխուած: Այո՛, կախման կէտեր ներելի է գործածել կրկնութիւններէ կամ աւելորդ խորհրդածութիւններէ խուսափելու համար, բայց ներելի չէ՛ երբ հատուածը տարրեր խմստ և մեկնութիւն կրնայ առնել. որովհետեւ այդ պարագային՝ բնագրի յիշատակութիւնը ուրիշ բան չէ՛, բայց եթէ բնագրի կամաւոր խեղաթիւրում:

Արդեօք Գերշ. Հեղինակը բանասիրական այս մեթոտով կը մօտենայ մեր սրբազան մատենագրութեան բնագիրներուն, նոր յայտնութիւններ բերելու համար. անշուշտ չենք ուզեր ի յառաջագունէ տալակուսիլ այս մասին, բայց նաեւ չենք կրնար լռութեամբ անցնիլ, ուստի մեր քննական ներածութեան Բ. մասը այս հայեցակէտով պիտի կատարենք յաջորդ թիւով:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

(Շարունակելի)

Այս տարուան «Բազմավէպ»ի 7-12 միացեալ թիւերը մէկ հատորով նուիրուած պիտի ըլլան Մխիթար Արքայոց մահուան 200-ամեայ Յիշատակին:

Տես մեր ծրագիրը «Բազմավէպ»ի կողքին 3-4րդ էջերուն վրայ:

ՀԱՅԿԱԿԱՆ

ՌԱԶՄԱՋԱՐՏԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Շար. տե՛ս Բազմավէպ 1949, էջ 28)

Բ. - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՌԱԶՄԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ

Շինարարական արուեստին մէջ՝ ռազմական ճարտարապետութիւնը զբաղւած է նոյնքան հին է որքան մարդու առաջին շինուածքը: Որովհետեւ՝ պատերազմը զոյւթիւն ունեցաւ նախ քան բնակարանին շինութիւնը: Այնպէս որ, երբ առաջին մարդը կը փորձէր իրեն համար բնակարան մը շինելու, աչքի առջեւ ունեցաւ թշնամիին՝ մարդ թէ՛ զազան՝ յարձակումներէն պաշտպանելու մտասկզբումը և ջանաց ըստ այնմ ձեւաւորել իր բնակարանը: Իրականին մէջ՝ առաջին բնակարանը ամրոցի մը նախատիպը եղաւ:

Յետոյ՝ շատ մը մարդիկ ջանացին միատեղ պաշտպանել իրենց բնակարանները և առ այդ յղացան շինութիւններ և շինուածաձեւեր, որոնք աւելի յարմար կերպով պիտի պաշտպանէին իրենց բնակավայրերը:

Դարերու հոլովումին մէջ այդ շինուածքները փոխեցին իրենց կերպարանքը և քէֆնիքը, զիրար ոչնչացնելու միջոցներուն կատարած «յառաջընթացութեան» համընթաց:

Որքան առեն որ կոխը կ'ըլլար նետով ու նիզակով, զոյւթիւն ունեցան հսկայ պարիսպներ, անմերձեալի զգեսակներ և անբռնարարի աշտարակներ, որոնց զանազան ձևեր կերտուածքին վրայ անդոր կը մնային նետերու թիթեւ սլաքները և բարաններու փոքրիկ քարէզուները:

Այս պարիսպներու ետեւ, հսկայ զգեսակ-

ներու և աշտարակներու շուքին տակ մարդկութիւնը կ'ապրէր աստիճան մը աւելի ապահով:

Ձեմ զիտեր ո'ր խելացին մէջտեղ հանեց վառող, ուրիշ մը թնդանթը և ահա մէն ինչ սկսաւ թաղուիլ ու անհետանալ երկրի մակերեսէն:

Բարձրաբերձ պարիսպները փլան և տեղի տուին խաւերու և փոսերու: Ամբարտաւան զգեսակները վերածուեցան հողատարներու և հսկայ աշտարակներ՝ զետեւիտը ապաստանարաններու: Եւ ատկից ի վեր ռազմական ճարտարապետութիւնը չհամարձակեցաւ զլուսը վեր բարձրացընելու և երկրի մակերեսէն դուրս գալու: Ընդհակառակն, ան սկսաւ խլուրդի նման հողը փորել, ամբակուս փաղուղիներ և զետեւիտը սրահներ շինել:

Հայկական ռազմական ճարտարապետութիւնը մինչեւ այս չընանը զալու պէտք չունեցաւ: Ան մնաց՝ քաղաքական աննպաստ իրադարձութեանց պատճառաւ, կոտի զիւցաղնական չընանին մէջ, երբ բարձրաբերձ պարիսպներն էին որ կուտային առաւելագոյն ապահովութիւնը:

Ռազմական ճարտարապետութեան տեսակէտով առաջին շինուածքը եղաւ «պատնէշ»ը, շինուած հողէ, քարէ և կամ նոյնիսկ փայտէ, հսովմայեցիներու շինածներուն նման:

Պատնէշին զերը տաւելապէս ռազմավարական է, անոր պաշտօնն է թշնամիին յարձակումին սաստկութեան թափը կուտրել, և անոր ճակտին միութիւնը խանգարելով՝ զայն աւելի զիւրաւ հարուս-